

«ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ»-Ի ՆՈՐ ՊՐԱԿԸ

Գիրքը հեղինակային համատեղ աշխատանք է, ընդ որում՝ շարունակական հրատարակությամբ. որ լույս է տեսնում առանձին պրակներով շուրջ երեք տարի այն կազմում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի աշխատակիցները (բաժնի վարիչ, բ. գ. թ. Ա. Ս. Գալստյան)¹: Պետք է նշել, որ նման բառարանի ստեղծումը խիստ արդիական և կարևոր է ժամանակակից հայերենի ընդհանուր բառապաշարի նորակազմությունների բառարանային ամբողջացման առումով:

Սույն պրակն ընդգրկում է ավելի քան 1500 բառամիրավոր, և, ինչպես նշվում է բառարանի ամփոփագրում, «ներկայացված են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում»: Եթե նախորդ պրակների դեպքում առանձնացվող նյութը համեմատվում էր առկա յոթ բառարանների տվյալների հետ, ապա այս պրակում ընդգրկված նյութը ստուգվել է ժամանակակից հայերենի բացատրական և նորաբանությունների տասներեք բառարաններով, և ըստ այդմ տեղ տրվել այն բառերին, որոնք արձանագրված չեն եղել նշված որևէ բառարանում:

Բառարանն իր բնույթով բացատրական է: «Նոր բառեր. Գ պրակ»-ի նոր բառերը և նորակազմությունները բերվում են բառարանագրման ճանաչված սկզբունքով, այն է՝ յուրաքանչյուր բառահոդվածի դեպքում տրվում է գլխաբառը, վերջինիս քերականական նշումը և բնագրային կիրառությունից բխող բացատրությունը, այնուհետև բերվում է բնագրային այն հատվածը, որում գործածված է տվյալ բառը, իսկ ամենավերջում՝ գործածության աղբյուրը (բնագիրը և էջը):

Օգտագործված աղբյուրները բովանդակությամբ միանգամայն բազմազան են՝ գեղարվեստական ինքնուրույն և թարգմանական գրականություն, գիտական և հրապարակախոսական ժողովածուներ և մենագրություններ, ամսագրային հոդվածներ և այլն: Որքան

¹ Ա. Ս. Գալստյան, Ս.Ա. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան, Նոր բառեր, պրակ Գ, Ե., «Ասողիկ» հրատ., 2017, 156 էջ:

էլ տարօրինակ է, աղբյուրների ցանկում հանդիպում են այնպիսիները, որոնք լույս են տեսել առնվազն մի քանի տասնամյակ առաջ, ուստի նրանցում եղած նորակազմությունները պիտի տեղ գտած լինեին նախկինում երևան եկած բառարաններում, այնինչ դրանք նոր-նոր բառարանագրվում են այս պրակում, որը միանգամայն խրախուսելի է և շնորհակալ լինելու արժանի (օրինակ՝ Օ. դը Բալզակ, Երկերի ժողովածու, հհ. 5-7, Ե., 1957-1959, Հ. Մենկևիչ, Խաչակիրներ, Ե., 1957, Կ. Անդրեև, Արկած որոնողները, Ե., 1968, Զ. Խալափյան, Մեռնող հառնող, Ե., 1975 և այլն):

Բառարանն ունի սեղմ առաջաբան («Երկու խոսք»), քերականական և գործառական նշումների, օգտագործված աղբյուրների (գրքեր, ամսագրեր, լրագրեր) համառոտագրված ցանկեր, նշվում են համեմատության եզր բառարանները:

Կարծում ենք, որ բառահոդվածների նման կառուցվածքը գնահատելի է, բառարանային մշակումը՝ հստակ: Նման մոտեցման արդյունքում ձևավորվել է գիտական պատշաճ մակարդակ ապահովող մի աշխատանք, և կարելի է անվերապահորեն ասել, որ հեղինակները հետևողական են իրենց իսկ ընդունած սկզբունքների հարցում:

Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի գործնական նշանակությանն ու կիրառությանը, ապա այն կարող է օգտակար լինել բառագիտությամբ հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, ուսանողներին, ինչպես նաև թարգմանության և լրագրության ոլորտի մասնագետներին:

Բառարանում, մասնավորապես օգտագործված աղբյուրների ցանկում նկատվում են ինչ-ինչ վրիպումներ, որոնք բացառելի են հետազայում:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ նման աշխատանքը իր թեմայով նորույթ է, և գիտական տեսակետից՝ որակյալ: Այն մեծապես նպաստում է ժամանակակից հայերենի բառապաշարի ամբողջացմանը և մշակմանը:

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Սարգսյան